ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ /Մ3 ՄԱՅՐՈՒՂՈՒ ՀԱՏՎԱԾ/ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՖԱՍԱԴՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԵՎ ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐԻ ՈՃԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/32»

ք. Տաշիր **« 01 » ապրիլի 2026թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը ի դեմս համայքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է իր «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՂԱՐԱՔԻԼԻՍԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Ջաղացպանյանի, որը գործում է «ՂԱՐԱՔԻԼԻՍԱ» ՍՊԸ-ն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ բազմաբնակարան շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների**ի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[1]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի մշակման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 890000 (ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

---

[1] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան	«Ղարաքիլիսա» ՍՊԸ
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 06929659
Հ/Հ 900272423014	ՀՀ 24101101941100
ՀՎՀՀ 06966995	<<Յունիբանկ>> Վանաձոր մ/ճ
	Տնօրեն՝
---------- **Է. Արշակյան**	----------Լ. Ջաղացպանյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«01» ապրիլի 2026թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/32»
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/1	Տես ստորև	դրամ	890000	1	ք. Տաշիր Վ. Սարգսյան 94	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	**Տեխնիկական բնութագիրը**
1	Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ բազմաբնակարան շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	ՆԵՐԱԾԱԿԱՆ Սույն Տեխնիկական առաջադրանքը ներառում է Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացումը, համաձայն լրացուցիչ պայմանագրի: Նախագծողի կողմից մշակված գծագրերը և սույն առաջադրանքով սահմանված այլ շինարարական փաստաթղթերը ներառվելու են շինարարական կազմակերպության ընտրության մրցութային փաթեթի կազմի մեջ որպես մրցութային փաթեթի անբաժանելի մասեր: Նախագծի կազմի մեջ պետք է ներառված լինի • շենքի չափագրում • ճարտարապետական մաս, • Կոնստրուկտորական մաս • Ինժեներական մասեր • Շին աշխատանքների կազմակերպման մաս և օրացուցային գրաֆիկ • նախահաշիվ. Նախագծի կազմի մեջ ներառման ենթակա ներկայացված մասերը հանդիսանում են նվազագույն պահանջ, սպառիչ չեն և Նախագծողը պարտավոր է լրացնել նախագծային փաստաթղթերը նոր մասերով, եթե դա անհրաժեշտ է: Սույն Տեխնիկական առաջադրանքը հանդիսանում է Պատվիրատուի կողմից տրվող Նախագծային առաջադրանք, որը պարտադիր է Նախագծողի կողմից կատարման համար: ՆԱԽԱԳԾՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ Առաջադրանքը կատարելու համար Նախագծողները պետք է ունենան որակավորման փաստաթղթեր. • ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված լիցենզիա «քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ

		կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի». 1. արտոնագրեր՝ ճարտարապետ, ճարտարագետ-կոնստրուկտոր 2. լիցենզիայի ներդիր՝ ցանկացած • Համապատասխան փորձառու մասնագետներ վերը նշված առաջադրանքները կատարելու համար: ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝ Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի ֆասադների փոխարինում և պատշգամբների ոճային վերակառուցում ՆԱԽԱԳԾՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Սույն տեխնիկական առաջադրանքը կատարելիս, Նախագծողը պետք է ուղղորդվի ՀՀ տարածքում գործող նախագծային նորմատիվ փաստաթղթերով, ստանդարտներով և շինարարությունը կարգավորող այլ փաստաթղթերով: Հատակագծային և տարածական լուծումների (արտաքին և ներքին տարածքների գոտիավորման) նախագծման համար պետք է հիմք հանդիսանա նմանատիպ կառույցների համար գոյություն ունեցող և կիրառվող միջազգային (հատկապես՝ եվրոպական) փորձը: Առաջադրանքը կատարելու ամբողջ ընթացքում Նախագծողը պարտավոր է սերտ համագործակցել Պատվիրատուի հետ անհրաժեշտ ուղեցույցներ ստանալու նպատակով: Միաժամանակ, առաջադրանքը կատարելիս Նախագծողը պարտավոր է առաջնորդվել ՀՀ կառավարության և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հաստատված նորմերով, փաստաթղթերով (ուղեցույցներով): Ամբողջ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը պետք է կատարվի ըստ հետևյալ փուլերի՝ I-ին փուլ՝ Կոմպլեքսային նախագիծ, II-րդ փուլ Հաստատում և փորձաքննություն III-րդ փուլ՝ Մրցութային փաստաթղթերի պատրաստում, Յուրաքանչյուր փուլը ներկայացնում է աշխատանքների կատարման առանձին բաժիններ/մասեր, որոնց հանդեպ հիմնական պահանջները ներկայացվում են ստորև. ՓՈՒԼ 1. ԿոմպլեքսայինՆախագիծ Նախագծման I-ին փուլը իրենից ներկայացնում է կոմպլեքսային նախագծի մշակումը և բաժանվում է հետևյալ ենթափուլերի՝ • Տեխնիկական նախագծ իմշակում, • Աշխատանքայի ննախագծի մշակում: Ենթափուլ 1.1. Տեխնիկական (էսքիզային) նախագիծ Նախքան նախագծում սկսելը, Նախագծողը պարտավոր է այցելել կառուցապատման վայրը, մանրամասն ուսումնասիրել և ծանոթանալ գոյություն ունեցող քաղաքաշինական իրավիճակին:Նախագծողը պարտավոր է համագործակցել Պատվիրատուի ներկայացուցիչների հետ: Պատվիրատուի նախընտրած այլընտրանքային լուծումը (լուծումները) Նախագծողը պարտավոր է քննարկել պատվիրատու ի հետ: Պատվիրատուի կողմից համաձայնեցված էսքիզային նախագիծը հիմք է հանդիսանալու հետագայում աշխատանքային նախագծի մշակման համար: Ենթափուլ 1.3. Աշխատանքային Նախագիծ Աշխատանքային նախագիծը, այսինքն՝ աշխատանքային գծագրերի մշակումը, հանդիսանում է սույն փուլի հիմնական ենթափուլը: Նախագծողից պահանջվում է մշակել աշխատանքային գծագրեր՝ ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ինժեներական մասեր, աշխատանքների կազմակերպման նախագիծ, օրացույցային գրաֆիկ և «Նախահաշիվ»: Բոլոր աշխատանքային գծագրերը պետքէ իրականացվեն AUTOCAD ծրագրային

		համակարգով, իսկ հաշվարկային փաստաթղթերը ներկայացվեն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից պահանջվող տարբերակով, հնարավոր է նաև էլեկտրոնային տարբերակով: Պարտադիր՝ աշխատանքային գծագրերի ցանկը ըստ նախագծի բաժինների և առանձին ալբոմների բերվում է ստորև. Բաժին 1. «Ճարտարապետաշինարարական մաս» • Բացատրագրեր, ընդհանուր տվյալներ և տեղեկություններ, • Տարածքի չափագրում • Գլխավոր հատակագծեր, հատակագծեր, կտրվածքներ, ճակատներ • Մասնագրեր, օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր • կոնստրուկտորական լուծումներ, մասնագրեր օգտագործվող սարքերի և սարքավորումների մանրամասն տեխնիկական բնութագրերը, նյութածախսիամփոփագրեր, • ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը: Բաժին2. «Ինժեներական մաս» ընդհահուր վերանորոգում Ընդհանուր տվյալներ և տեղեկություններ, ○ երկայնական և լայնական կտրվածքներ, հանգույցներ ○ օգտագործվող սարքերի և սարքավորումների, նյութերի մանրամասն տեխնիկական բնութագրերը, • մասնագրեր և նյութածախսի ամփոփագրեր, • ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը: Բաժին3. «Նախահաշիվ» Ամփոփ նախահաշիվ, օբյեկտային նախահաշիվներ, լոկալ նախահաշիվներ, ծավալաթերթ: Նախահաշիվը պետք է կազմվի ՀՀ տարածքում գործող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված գնացուցակներով (ինֆորմացիոն տեղեկագրով) և նորմերի հիման վրա: Հաշվարկը կատարվում է ՀՀ դրամով: Բացի վերը նշված Նախահաշվից, Նախագծողը համակարգչային ֆայլով (ցանկացած ժամանակից կրիչով) պետք է ներկայացնի կատարվելիք աշխատանքների միավոր գների ցանկ և նախագծեր Պատվիրատուի կողմից ընդունելի ձևով: Բաժին4. «Շինարարության կազմակերպման նախագիծ» • Շինարարական գլխավոր հատակագիծ, • Անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները, • Օրացուցային գրաֆիկ, • ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրեր և փաստաթղթեր, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը: ՓՈՒԼ 2. Հաստատում և փորձաքննություն Նախագծի հաստատումը հանդիսանում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման II-րդ փուլը և ներառում է նախագծի հաստատումը և փորձաքննությունը: Նախագծային աշխատանքների ավարտից հետո, Նախագծողը Աշխատանքային նախագիծը, այսինքն՝ Նախագիծը իր բոլոր բաժիններով, այդ թվում նաև՝ Նախահաշիվը, պարտադիր կերպով ներկայացնում է փորձաքննության: Դիտողություններով վերադարձված նախագծերում Նախագծողը իր հաշվին և հնարավորինս կարճ ժամկետներում պարտավոր է կատարել համապատասխան ուղղումները և կրկին ներկայացնել փորձաքննությանը: Ընդ որում՝ Նախագծով շինարարության իրականացման ընթացքում ցանկացած փոփոխություն Նախագծող կազմակերպության հաշվին պետք է անցնի նմանատիպ փորձաքննություն, եթե դրա պահանջը ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ: Նախագիծը համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված միայն փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու դեպքում: Փորձաքննության տեսակը սահմանվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

ՓՈՒԼ 3. Մրցութային փաստաթղթերի պատրաստում

Նախագծողի կողմից սույն Տեխնիկական Առաջադրանքի մրցութային փաստաթղթեր կազմում են «Գծագրեր» և «Տեխնիկական հատկորոշումներ /նորմեր և ստանդարտներ» բաժինները:

«Տեխնիկական հատկորոշումներ / նորմեր և ստանդարտներ բաժնում Նախագծողը պետք է ներկայացնի տվյալ շենքի հետ կապված շինարարական բոլոր արտաքին աշխատանքների կատարման նկարագրությունը, որտեղ պետք է արտացոլվեն շինարարության կատարման ժամկետների պահանջները, նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջները: Սույն բաժնում Նախագծողը Պատվիրատուի հետ համատեղ պետք է պատրաստի այն բոլորլ բացուցիչ պահանջները, որոնք ներկայացվելու են շինարարական նյութերի/ ապրանքների և աշխատանքների որակին, որը պիտի պարտադիր լինի Կապալառուի համար՝ շինարարությունը իրականացնելու ընթացքում:

Կողմերին տրամադրվող փաստաթղթերը

Սույն առաջադրանքը կատարելու համար Պատվիրատուն տրամադրում է Նախագծողին հետևյալ փաստաթղթերը՝

- համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
- տեխնիկական պայմանները՝ անհրաժեշտության դեպքում
- շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն՝ անհրաժեշտության դեպքում

Նախագծողը համաձայն սույն Տեխնիկական առաջադրանքի Պատվիրատուին է հանձնում առնվազն հայերեն լեզվով հետևյալ փաստաթղթերը նշված քանակությամբ՝

- տեխնիկական անձնագիրը՝ 3 օրինակից,
- համաձայնեցված աշխատանքային նախագիծը /ճարտարապետական, կոնստրուկտորական, ինժեներական, աշխատանքների կազմակերպման, նախահաշիվ մասերը/՝ 5 օրինակ և մեկ օրինակ էլեկտրոնային կրիչով,
- փորձաքննության դրական եզրակացությունը՝ 2 օրինակից,
- տեխնիկական հատկորոշիչները՝ 2 օրինակ տպագիր և մեկ օրինակ էլեկտրոնային կրիչով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով: Բոլոր նյութերը ներկայացնել երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:

Կատարման ժամկետները

Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքները պետք է կատարվեն սույն տեխնիկական առաջադրանքով նախատեսված փուլերով և ենթափուլերով: Նախագծողի կողմից ներկայացվող նյութերը պետք է ընդունվեն Պատվիրատուի կողմից նշանակված աշխատանքների ղեկավարի կողմից սահմանված կարգով:

Փորձաքննության արդյունքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Կատարողը պարտավոր է իրականացնել 5 օրացուցային օրվա ընթացքը, ընդհանուր առաջադրանքը պետք է կատարվի և ներկայացման ենթակա նյութերը Պատվիրատուին պետք է տրամադրվեն առվելագույնը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Ցանկ

		Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի

Համար	Բնակավայրը	Փողոց	Շենք	Շենքի նորոգվող հատվածի մակերեսը քմ
1	Տաշիր	Երևանյան	9	1215
2	Տաշիր	Երևանյան	14	906
3	Տաշիր	Էրեբունի	17ա	540
4	Տաշիր	Էրեբունի	17բ	540

Նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողը պարտավոր է ներկայացնել ըստ առանձին շենքերի, կամ խմբավորումը պատվիրատուի հետ համաձայնեցված տարբերակով:

սկիզբը	*ավարտը*
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից	Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայությունների մատուցման ավարտը 30 օրացուցային օր

Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ նախագծող կազմակերպության կողմից:

Կատարողը նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներկայացնի համապատասխան լիցենզիա ունեցող անձի (կազմակերպության) փորձաքննությանը և Պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը տրամադրի փորձաքննված տարբերակով: Նախագծերի լրամշակումը՝ ըստ անհրաժեշտության (եթե փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 5-օրյա ժամկետում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունները Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կընդունվի և դրա դիմաց վճարումները կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:

Կատարողը պարտավոր է շինարարության թույլտվության տրամադրման փուլում ծանուցումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում ապահովել նախագծանախահաշվային փաստաթղթերի https://urban.e-gov.am/hy/ հարթակում համապատասխան մասնագետների կողմից մուտքագրման և էլեկտրոնային թվային ստորագրության իրականացումը:

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900272423014
ՀՎՀՀ 06966995

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ղարաքիլիսա» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21
ՀՎՀՀ 06929659
ՀՀ 24101101941100
<<Յունիբանկ>> Վանաձոր մ/ճ
Տնօրեն

Լ. Ջաղացպանյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«01» ապրիլի 2026թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/32»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Երևանյան փողոցի /մ3 մայրուղու հատված/ բազմաբնակարան շենքերի ֆասադների փոխարինման և պատշգամբների ոճային վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	...	...	...	...	623000	623000	623000	623000	623000	623000	623000	890000	890000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա մատուցված ծառայությունների դիմաց 50 տոկոսի մասով իրականացվելու է հանձման-ընդունման արձանագրության ստորագրումից 30 օրվա ընթացքում, իսկ մնացորդը՝ իրականացվելու է ծրագրով նախատեսված մասնակցային բյուջետավորման ծրագրի ֆինանսական միջոցների տրամադրումից հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900272423014
ՀՎՀՀ 06966995

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ղարաքիլիսա» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21
ՀՎՀՀ 06929659
ՀՀ 24101101941100
<<Յունիբանկ>> Վանաձոր մ/ճ
Տնօրեն՝

Ջաղացպանյան
(ստորագրություն) Կ.Տ.

Յունիբանկ Գուգարք մասնաճյուղ

30/03/26

Օրինակ 2

48H0

Վճա[illegible]ման հանձնարարագիր N 2603300663050[illegible] 01

30/03/26 14:18:52 F209

Նշում: Սույնով առաջարկում ենք հաշիվների քաղվածքն ամիսը մեկ անգամ անվճար ստանալ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ցանկացած մասնաճյուղում:

Դեբետի հաշիվ		24101101941100 / 30202	Գումար
Վճարողի բանկ	AM24153 AM24153 Յունիբանկ Գուգարք մասնաճյուղ		117,658.00 AMD
Վճարող	«ՂԱՐԱՔԻԼԻՍԱ» ՍՊԸ 06929659 ՎանաձորՏիգրան Մեծի 63/21		
Հարկատուի կոդը	2006929659		
Կրեդիտի հաշիվ		900008000664	
Ստացողի բանկը	AM90000 Կենտրոնական գանձապետարան		
Ստացող	Հայտի և պայմանագրի ապահովումը բան կային երաշխիքով կամ կանխիկ փողի ձ		
Գումարը տառերով	Մեկ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր հիսունութ ՀՀ դրամ		
Վճարման նպատակը	N«ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/32» ծածկագրով պայմանագրի ապահովում		

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «UNIBANK» OJSC 02559[illegible] 10489

Կ.Տ. 06929659 ՂԱՐԱՔԻԼԻՍԱ КАРАКИЛИСА KHARAGHILISA N2

Հաճախորդի ստորագրությունը

Բանկի ստորագրություն

Բանկային գաղտնիք*